

**ՄԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ՍՈՒՄԱՆՆԱ ՉԱԼԱԲՅԱՆ

ԼՈՒՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անգլերենի՝ որպես օտար լեզվի ընդհանուր ուսումնասիրումը և հատուկ՝ մասնագիտական նպատակով ուսուցումը շեշտակիորեն տարբերվում են միմյանցից, քանի որ առաջինի դեպքում սովորողները ձեռք են բերում ընդհանուր գիտելիքներ անգլերենի վերաբերյալ, որն ընդգրկում է քերականության և բառապաշարի յուրացում՝ ամենօրյա շփման հմտություններ ձեռք բերելու նպատակով: Մինչդեռ անգլերենը հատուկ նպատակով սովորող ուսանողներն իրենց ընդհանուր լեզվական իմացությունը հավելում են նաև համապատասխան բնագավառին վերաբերող գիտելիքներ, որոնք կօգնեն նրանց ոչ միայն ամենօրյա շփման, այլև մասնագիտական գործունեության ընթացքում:

Հայտնի է, որ մասնագիտական նպատակով անգլերենի ուսուցումը առավելապես կենտրոնացած է տեքստի բովանդակության, այլ ոչ թե բառային, հոմանիշային, քերականական և լեզվական այլ կողմերի վրա: Այս դեպքում անհրաժեշտ է մասնագիտական տեքստը մատուցել անգլերենով, ուսանողների՝ օտար լեզվի իմացությունը հասցնել այնպիսի մակարդակի, որ նրանք ի վիճակի լինեն կարդալ, ընկալել և հեշտությամբ վերարտադրել մասնագիտական տեքստեր, գրույցներ վարել տվյալ ոլորտին վերաբերող թեմաներով: Այս դեպքում նրանք անգլերեն են սովորում այն համատեքստում, որը նրանց հետաքրքիր է և հոգեհարազատ:

Ինչ նպատակով էլ ուսումնասիրվի օտար լեզուն, կարևոր է գիտակցել, որ դա աստիճանական բնույթ կրող գործընթաց է, որի շրջանակներում սխալներ կարելի է ակնկալել ուսուցման բոլոր մակարդակներում:

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել անգլերենը հատուկ նպատակով ուսումնասիրող ուսանողների շրջանում սխալների առաջացման պատճառները, առաջարկել սխալները շտկելու և սխալվելու մտավախությունը նվազագույնի հասցնելու արդյունավետ մոտեցումների և միջոցների տարբերակներ:

Սխալները կարող են լինել հնչյունաբանական, բառային, քերականական, ինչպես նաև մշակութային առանձնահատկություններով պայմանավորված: Մ. Բարթը տարբերակում է «գլոբալ» և «տեղային» սխալներ: *Գլոբալ սխալները* խոչընդոտում են հաղորդակցմանը և թույլ չեն տալիս սովորողին ընկալել դրա որոշ հատվածներ, մինչդեռ *տեղային սխալները*

վերաբերում են նախադասության միայն մեկ անդամին և չեն խանգարում ամբողջական մտքի ընկալմանը¹:

Ամերիկացի լեզվաբան Ռ. Լադոն 1950 թ., ուսումնասիրելով օտար լեզվի յուրացման ընթացքում հանդիպող սխալները, առաջ քաշեց *հակադիր վերլուծության տեսությունը*, ըստ որի՝ այս գործընթացում խնդիրներ են առաջացնում օտար և մայրենի լեզուների համակարգերի տարբերության հետ կապված: Լադոն պնդում է, որ երկու լեզուների կառուցվածքային համադրությունները թույլ կտան սովորողներին պատկերացնել ու ըմբռնել իրենց առջև ծառացած խնդիրները: Բիհնիորիստական տեսության կողմնակից այս լեզվաբանի կարծիքով՝ լեզվի ուսուցումը պահանջում է հին սովորույթների փոփոխություն և նորերի ձեռքբերում: Այսպիսի մոտեցմամբ առաջարկվում է լսարանում շեշտը դնել մեխանիկական վարժությունների և նկատված սխալներն անմիջապես ուղղելու վրա²:

Սելինկերը 1972 թ. առաջին անգամ օգտագործեց «մետալեզու» եզրը, որն օտար լեզուն ուսումնասիրողների կողմից ստեղծված համակարգ է: Դա մի ուրույն կառուցվածք է, որը հնարավորություն է տալիս ուսանողներին հաղթահարելու օտար լեզվի ուսումնասիրման ընթացքում առաջացած հոգեբանական խնդիրները³:

Ինչպե՞ս ուղղել ուսանողի սխալը՝ չհիասթափեցնելով նրան: Այս խնդիրն առկա է հատկապես լսարանում, երբ ուսանողն իրեն ավելի կաշկանդված է զգում ընկերների շրջապատում: Անհրաժեշտ է կողմնորոշվել, թե երբ, ինչպես և ինչպիսի սխալներ ուղղել, և արդյոք մի՞շտ է ճիշտ կատարվող բոլոր սխալները հենց տեղում ուղղելը: Մասնագիտական տեքստի վերարտադրման ժամանակ կամ նման թեմաներով գրույցների ընթացքում առաջին հերթին կարևոր է ուղղել բառային սխալները, քանզի դրանք կարող են հանգեցնել թյուրըմբռնման: Պակաս վտանգավոր չեն և հնչյունաբանական սխալները, քանզի ճիշտ ընտրված բառերի սխալ արտաբերումը նույնպես մտքի սխալ ընկալման պատճառ կդառնա:

Բանավոր սխալների ուղղման գործընթացը, բնականաբար, էականորեն տարբերվում է գրավոր աշխատանքում կատարված սխալների ուղղումից: Մակայն, ինչ միջոց էլ ընտրի դասախոսը, խորհուրդ է տրվում հիշել. «Դուք ոչ թե սխալն եք ուղղում, այլ՝ մարդուն»⁴:

Օտար լեզվի ուսուցման ընթացքում դասախոսի հիմնական խնդիրը պետք է լինի օգնել ուսանողին հասկանալու իր սխալները, լուծումներ գտնել շտկելու դրանք, պարզել լեզվական այն հմտությունները, որոնք կնպաստեն օտար լեզվի ավելի դյուրին յուրացմանը:

Ուսումնասիրության նպատակով հարցման է ենթարկվել ՀՊՏՀ առաջին և երկրորդ կուրսերում սովորող 100 ուսանող, որ բուհ են ընդունվել անգլերենի ընդհանուր գիտելիքներով: Ըստ նախատեսված ծրագրի՝ երկու տարի նրանք ուսումնասիրում են մասնագիտական անգլերեն, մասնավորապես՝ ծանոթանում են տնտեսագիտության հիմնական հասկացություններին և կարևորագույն թեմաներին, իսկ երկրորդ կուրսի վերջում ձեռք են բերում ավելի նեղ մասնագիտական ոլորտին (հաշվապահություն, կառավարաբանություն, մաքսային գործ, արժեթղթերի շուկա և այլն) վերաբերող գիտելիքներ:

Օտար լեզվի յուրացման գործընթացում կարևորելով սխալների ուղղման տարբերակի ընտրությունը՝ գրեթե բոլոր ուսուցիչներն առանձնացնում են ընկերների կողմից դրանց

¹ Տե՛ս **Burt M.**, Error analysis in the adult EFL classroom. TESOL Quarterly, 9, 1975, էջ 53-63:

² Տե՛ս **Lado R.**, Linguistics across cultures. University of Michigan Press, 1957:

³ Տե՛ս **Selinker L.**, Interlanguage. International Review of Applied Linguistics (10), 1972, էջ 201-231:

⁴ Տե՛ս **Bartram M. and Walton R.**, Correction. Language Teaching Publications, 1991, 1991, էջ 93:

ուղղումը: Բարտրամը և Վոլթոնը պնդում են, որ ուսանողների դերը սխալների շտկման գործում շատ կարևոր է, քանի որ դա ստեղծում է համագործակցային մթնոլորտ⁵:

Հարցման ենթարկված 100 ուսանողների 31%-ը կողմ է գրավոր աշխատանքների՝ ընկերների կողմից ուղղմանը, մինչդեռ 69%-ը դեմ է այս մեթոդին:

Սխալների փոխադարձ ուղղումն արդյունավետ միջոց է, քանզի նպաստում է, որ ուսանողներն առավել ուշադիր լինեն դասի ընթացքում, անմիջապես նկատեն սխալները, գիտակցեն, որ սխալների ուղղումն ուսուցման գործընթացի անքակտելի մասն է կազմում, հաղթահարեն սխալներ կատարելու նկատմամբ առկա վախը: Ինքնուղղումն օգնում է լեզվական համակարգի ընկալմանը և հաճախ հանդիպող սխալների բացառմանը:

Հարցմանը մասնակցած 100 ուսանողների 51%-ը գերադասում է սխալների ուղղում անմիջապես տեղում՝ դասախոսի կողմից, 35%-ը նախապատվությունը տալիս է աշխատանքը գրավոր ներկայացնելուց հետո սխալների ուղղմանը, 14%-ը նախընտրում է լսարանից դուրս՝ անհատական կարգով աշխատանքի ստուգմանը:

Պետք չէ բացառել, որ բանավոր աշխատանքի դեպքում սխալների անմիջական ուղղումը կարող է անարդյունավետ լինել՝ նվազեցնելով ուսանողի ոգևորությունը: Մակայն չուղղելու դեպքում էլ վտանգվում է մյուս ուսանողների վստահությունն իրենց գիտելիքների նկատմամբ:

Խոսքի ուղղման մի տարբերակ է նաև սխալի փոխարեն դասախոսի կողմից նախադասության ճիշտ արտաբերումը: Օրինակ՝

Ուսանող - Our economic interactions with others are thus necessitated by two contrasts*.

Դասախոս - So, you say they are necessitated by two constraints.

Այս ձևով դասախոսը հնչեցնում է բառի ճիշտ տարբերակը՝ ուսանողի ուշադրությունը հրավիրելով ն՝ արտասանության, և՝ իմաստային առանձնահատկությունների վրա:

Բազմաթիվ սխալների պարագայում, ուսանողին շարունակ չընդհատելու նպատակով, դասախոսը կարող է գրի առնել դրանք և քննարկել ուսանողի պատասխանից հետո: Այս դեպքում պետք է կողմնորոշվել, թե տվյալ պահին որն է ավելի կարևոր՝ լեզվական այս կամ այն երևույթի ճիշտ կիրառումը, թե՞ բանավոր խոսքի սահունությունը:

Բառերի ճիշտ համակցությունը յուրացնելու համար ուսանողներին կարելի է հանձնարարել իրենց անցած տեքստերից, խառը տրված բառերից ծանոթ մասնագիտական բառակապակցություններ կազմել: Օրինակ՝

the price	buyers
a multidimensional	know-how
marginal	per unit

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 81:

* Բառի օգտագործման սխալ տարբերակն է: Ընդգծված է ճիշտ տարբերակը:

to redistribute	decision
potential	cost
demand	price
technological	function
to impose	curve
alternative	taxes
production	incomes

(the price per unit, a multidimensional decision, marginal cost, to redistribute incomes, potential buyers, demand curve, technological know-how, to impose taxes, alternative price, production decision):

Նախդիրների ճիշտ օգտագործման համար արդյունավետ է հետևյալ վարժությունը, որը նույնպես ուսանողից պահանջում է բառակապակցությունների կազմում՝ առաջնորդվելով որոշակի բառերի և նախդիրների համակցելիությամբ: Օրինակ՝

the demand	on wages
according	around three economic questions
to cut back	of sellers' intentions
to find	on the price of a good
limits	of output
in the	for every good
to revolve	short run
an expression	out what price will be charged
to depend	to the production of any good
rate to	the law of demand

(the demand for every good, according to the law of demand, to cut back on wages, to find out what price will be charged, limits to the production of any good, in the short run, to revolve around three economic questions, an expression of seller's intentions, to depend on the price of a good, rate of outputs):

Ուսանողի՝ մասնագիտական տեքստի ընկալման աստիճանը գնահատելու նպատակով կարելի է արդեն յուրացված նյութից մի հատված ներկայացնել՝ միտումնավոր սխալներով: Այս դեպքում ուսանողը պետք է կարդա տեքստը՝ փորձելով գտնել իմաստային սխալը: Որպես օրինակ կարող է ծառայել հետևյալ տեքստային հատվածը.

1. Supply is an expression of consumer buying intentions, not a statement of actual purchases. 2. Frictional unemployment exists when the number of workers demanded falls short of the number of persons in the labour force. 3. The labour force consists of everyone under the age of sixteen who is actually working plus all those who are not working but are actively seeking employment. 4. Inflation is a decrease in the average level of prices, not change in any specific price.

1. Demand is an expression of consumer buying intentions, not a statement of actual purchases. 2. Cyclical unemployment exists when the number of workers demanded falls short of the number of persons in the labour force. 3. The labour force consists of everyone over the age of sixteen who is actually working plus all those who are not working but are actively seeking employment. 4. Inflation is an increase in the average level of prices, not change in any specific price.

Ուսուցման կարևորագույն մաս է նաև լեզվական նոր նյութի մշակումն ու մատուցումը:

Ինչպես հայտնի է, մտքի շարադրման ընթացքում բառերի փոխկապվածությամբ կազմվում են ավարտուն միավորներ, որոնք որոշակի իմաստ են կրում, ընդ որում՝ հիմնական դերը պատկանում է, այսպես կոչված, միջուկային բառերին: Լեզվական միավորները «համախմբվում են» միջուկային բառերի շուրջ՝ ստեղծելով իմաստային համակարգ, օրինակ՝

TRADE BALANCE	influences	the value of the country's currency in relation to those of other nations
	focuses on	deficit and surplus
	has to do with	debtor and creditor nations
	is concerned with	visible and invisible transactions
	is based on	the net balance between a country's exports and imports
	consists of	credit and debit items
	has	the objective of providing accounting information to the country's international trade
	carries	an item called errors and omissions

Խոսքի զարգացումը բավական բարդ գործընթաց է. որոշակի բառապաշարի յուրացումը դեռևս չի ենթադրում դրա միավորների համակցված ու ճիշտ գործածություն: Փորձը ցույց է տալիս, որ լեզվական նյութի իմաստային ձևավորումը և մատուցումը ուսանողին հնարավորություն է տալիս ընկալելու մասնագիտական տեքստի առավել կարևոր բառային միավորները, յուրացնելու լեզվական նյութը նաև կայուն արտահայտությունների մեխանիկական արտաբերմամբ:

Օտար լեզվի յուրացման գործընթացում սխալներն անխուսափելի են: Վերջիններս օգնում են դասախոսին պատկերացում կազմելու ուսանողի լեզվական գիտելիքներում առկա թերությունների մասին, որոնք պետք է շտկել: Միննույն ժամանակ հարկ է գիտակցել, որ սխալները չափազանց զգուշությամբ պետք է ուղղել, հակառակ դեպքում կարելի է բախվել անցանկալի հետևանքների: Անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են օտար լեզվի ուսուցման նպատակը, ուսանողի լեզվական իմացության մակարդակը, սխալների ուղղման միջոցները և արդյունավետությունը: